

Նախկին չորս գլխոց մէջ կոչումներու բազմութիւն մը հաշուեցինք մեր: Արդեօք այդ բոլորն ուրոյն անօթոց անուններ էին, արդեօք գէթ ոմանք զըչազրաց սխալագրութեան պտուղ չեն: Այս կասկածը կարելի է այն փոքրութիւ անուանց նկատմամբ՝ որոց մի միայն վկայութիւն կայ: Բայց մեր տեսած անուանակոչութիւնք մեծագոյն մասամբ մեկէ աւելի վկայութիւն ունէին զանազան մատենագրաց եւ մեկնչաց քով, որով դժուարին է երկբայիլ անոնց ստուգութեան մասին, թէեւ անկարելի չէ որ երբեմն մէկ սըխալն ընդհանրանար:

Ծ. — Նորագիտ ակօրներ: — Ա. — Անի՛ ուս. Ն. Մառի աշխատութեամբ շատ բան արտադրեց իւր հնութիւններէն, որոնք բնականապէս իւր գոյութենէն աւելի հին չեն կարող լինել: Ուսուցչապետն 1910ին կայս. Հնախօս. Ընկերութեան առջեւ անոնց մասին զեկուցում մը կարդաց, որոյ համառօտութիւնն հրատարակեցաւ անցած տարի Արարատ հանդիսի մէջ, թարգմանութեամբ Յ. Ա. Ե.: Բաղձալի էր հրատարակութիւնն հնութեանց ձեւերուն իսկ, տեսնելու համար անոնց աղերսը մեր պատմական նկարագրութեանց հետ: Կրնանք սակայն այժմէն խորհիլ՝ թէ արարական